ՎԱՐԱԳԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Վանից արևելք բարձրանում է Վարագա լեռը, ուր, ավանդությունն ասում է՝ ապաստան գտան հեթանոս Հռոմից հալածական քրիստոնյա Հռիփսիմե իշխանուհի օրիորդն ու իր ընկերուհիները և թաղեցին Քրիստոսի խաչափայտի մասը, որ բերել էին իրենց հետ։ Ահա էս սրբությունն է, որ տոնում է հայոց եկեղեցին Վարագա խաչի անունով, և էս խաչի ու էս սարի վրա է կանգնած Վարագա հռչակավոր վանքը, ուր հնում թաղվում էին Վասպուրականի թագավորները։

Անցյալ դարի կեսերում Հայոց աշխարհքի վրա մի արծիվ էր պտտվում։ Պտտվեց, պտտվեց ու Վարագա սրբազան բարձունքը, Վարագա հոյակապ վանքը ընտրեց իրեն բույն։ Նա, էն կորովի արծիվը, ապագա Հայոց Հայրիկը, արծվենի հայացքով նկատել ու չափել էր համատարած խավարը, որ տիրած էր իր հայրենի երկրին և գալիս էր ջահ վառելու Վասպուրականի բարձրությունների վրա, չորս կողմը լուսավորելու, և անելու ամեն բան, ինչ որ «ազգին միության, հայրենյաց շինության, եկեղեցյաց բարեզարդության և հայ մանկտվույն լուսավորության կվերաբերին»։ Ու 1857 թվին ձգեց փրկարար գործի և գործունեության հիմքը։ Ուսումնարան բաց արավ, տպարանական մամուլ բերավ, որ առաջին անգամն էր տեսնում Հայաստանի հողը, և սկսեց ամսագիր հրատարակել «Արծվի Վասպուրական», որ «թռուցյալ հայրենասեր թևոք յԱրծրունի մենաստանէն Վարագա» անդադար կանչում էր «լուսավորություն, լուսավորություն», քաջ գիտենալով՝ լուսավորյալ ազգերն են միմիայն, որ մարդավայել կապրեն և հավատալով, որ՝ «թե ուշ, թե անագան իր ձենը հայոց ականջին պիտի հասնի»։

Բայց աղքատ էր Հայոց Արծիվը և հաճախ ստիպված էր թևածելու դեպի հեռու հորիզոններ, դեպի պանդխտություն։ Եվ մի քանի անգամ նա հայտնվեց ցրված հայության մեջ, զանազան երկիրներում, ամեն անգամ սրտերը վառելու հայրենիքի սիրով, ամեն անգամ սնունդ տանելու իր ճտերին, որ հավաքել էր Վարագա սարի վրա,

ամեն անգամ ջանալով ավելի ու ավելի հիմնավորել ու մեծացնել իր, ճշմարիտ որ, հայրական գործը։

Ահա՛, էս պայծառ ու գեղեցիկ գործի սկզբնավորության հիսնամյակն է, որ լրացավ երեք տարի առաջ, բայց անկարելի եղավ իր ժամանակին տոնելու և նշանակած է այժմ, հունիսի 20-ին։

Հոբելյանն իր բարձր հովանու տակ է առել ամենայն հայոց վեհափառ կաթողիկոսը, առանձնացնելով նրան ազգային հանդեսների մեջ և հռչակելով որպես տոն հայ ժողովրդի կուլտուրականության, նրա անվերջ ձգտումի դեպի լույսն ու գիտությունը։

Նվիրական տոն, նվիրական վայրեր, նվիրական անուններ ու հիշատակներ և, ի՛նչ կասկած, ամեն հայ սրտով կամ գործով մասնակից է լինելու էս մեծ հանդեսին Վարագա բարձունքների վրա։